

ՀԱՅ ԱՒԵՏԱՐԱՆԱԿԱՆ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՎԱՐԺԱՐԱՆ

Միջնակարգ բաժինի 8-րդ դասարան

2015 – 2016 տարեշրջան

Հայոց պատմության դասանիւթերու բովանդակութեան պատկեր

Դասագիրք՝ «Հայոց Պատմութիւն

Հայաստան Ու Հայութիւնը Գ.-ԺԳ. Դարերուն»:

Ուսուցչուհի՝ Անի Պիլալեան

<u>Բովանդակութիւն</u>	<u>Դասաւանդման նպատակակէտեր</u>
<p>«ՀԱՅԱՍՏԱՆ ԱՌԱՋԻՆ ՔՐԻՍՏՈՆԵԱՅ ՊԵՏՈՒԹԻՒՆ»</p> <p>Մծբինի դաշնագիրը</p> <p>Տրդատ Գ. եւ Հայաստանի քրիստոնէութեան դարձը</p> <p>Նոր կրօնքը եւ հայերը</p>	<p>-Գիտնալ որ ամբողջ Գ. դարու տեւողութեան հայերը պարտաւորուեցան պայքար մղել Սասանեան պարսիկներուն դէմ:</p> <p>-Անոնց նպատակն էր ո՛չ միայն նուաճել Հայաստանը, այլ նաեւ՝ ամբողջ Արեւելքը:</p> <p>-Գիտնալ որ 298-ին Հռոմի եւ Պարսկաստանի միջեւ կնքուեցաւ Մծբինի դաշնագիրը:</p> <p>-Ճշդել դաշնագիրին կարեւորութիւնը Հայաստանի համար:</p> <p>-Գիտնալ որ Տրդատ Գ. կը վերահաստատուէր հայկական գահին վրայ:</p> <p>-Գիտնալ որ Տրդատ Գ. կ'ընդունի քրիստոնէութիւնը եւ զայն պետական կրօն կը հռչակէ 301-ին:</p> <p>-Մատնանշել որ քրիստոնէութիւնը արդէն բաւական տարածուած էր Հայաստանի մէջ, սկսեալ Թաղէոս եւ Բարթողիմէոս առաքեալներէն:</p>

<p>Պայքար Հեթանոսության եւ Քրիստոնէութեան միջեւ</p> <p>Մեծն Տրդատի եւ Գրիգոր Լուսաւորիչի Գործը</p>	<p>–Բացատրել որ քրիստոնէութիւնը պաշտօնապէս Հայաստանին պարտադրուեցաւ Տրդատի կողմէ:</p> <p>–Գիտնալ որ Գրիգոր մեկնեցաւ Կեսարիա՝ Հայաստանի եպիսկոպոսապետ ձեռնադրուելու:</p> <p>–Անուանել Անահիտի, Աստղիկի եւ Վահագնի նուիրուած մեհեանները, զորս քանդուեցան Գրիգորի եւ իրեն ընկերակցող նախարարական զօրքին կողմէ:</p> <p>–Նշել որ Տրդատ Գ.ի երկար գահակալութիւնը մեծ բախտաւորութիւն մը եղաւ Հայաստանի համար ներքին եւ արտաքին ճակատներու վրայ:</p> <p>–Գիտնալ որ Տրդատ զօրացուց Այրուծին: Գեղեցկացուց Գառնիի ամրոցը եւ վերաշինեց նախկին մայրաքաղաք Արտաշատը:</p> <p>–Գիտնալ որ Դ. դարու երկրորդ կէսէն սկսեալ Արշակունեաց Հայաստանի կացութիւնը դարձած է տագնապալի:</p> <p>–Հասկնալ հայ դեկավարութեան առած որոշումը. հարկ էր գտնել հոգեկան եւ մշակութային ամուր կռուաններ:</p> <p>–Դասել այդ կռուանները՝ լաւապէս իւրացուած քրիստոնէութիւն, իսկ միւսը պէտք է ըլլար ազգային ինքնուրոյն մշակոյթը՝ հիմնուած սեփական գիրի եւ գրականութեան վրայ:</p>
<p>Մեսրոպ Մաշտոց</p> <p>Գիրերու Գիւտը</p>	<p>–Գիտնալ որ Մեսրոպ Մաշտոց ծնած է Տարօնի Հացեկաց գիւղը եւ ստացած յունական կրթութիւն:</p> <p>–Վերլուծել որ նոր կրօնքին չտարածուելուն պատճառը ժողովուրդին անգրագիր ըլլալն է:</p> <p>–Բացատրել որ նմանօրինակ գիւտի մը իրագործումը կը կատարուէր միայն խմբային աշխատանքով:</p>

<p>Դպրոցներու Հիմնումը</p> <p><u>Թարգմանիչներ</u></p> <p>Ե. դարու հայ հեղինակներ</p> <p>ՎԱՐԴԱՆԱՆՔ</p> <p>Վարդան Մամիկոնեան</p> <p>Աւարայրի ճակատամարտը</p>	<p>-Դասել անձնաւորութիւններու ցանկը,որոնք ծառայեցին ստեղծելու հայկական գիրերը:Յանձինս Մ. Մաշտոցի, Սահակ կաթողիկոսին Վռամշապուհ թագաւորին եւ Մ. Մաշտոցի աշակերտներուն:</p> <p>-Նշել Սահակ Պարթեւի եւ Մ. Մաշտոցի ծրագիրները գիրերու գիւտէն ետք:</p> <p>-Դպրոցներ բանալ:</p> <p>-Ձեռնարկել կրօնական եւ պատմական գիրքերու թարգմանութեան:</p> <p>-Գիտնալ որ առաջին օրէն Մեսրոպ Մաշտոց եւ Սահակ Պարթեւ եւ իրենց աշակերտները ձեռնարկեցին Սուրբ գիրքի եւ կրօնական գիրքերու թարգմանութեան:</p> <p>-Շեշտել կարեւորութիւնը հայ հեղինակներու ստեղծած ինքնուրոյն գրականութեան: Թուել հեղինակներու անունները. Կորիւն, Եղիշէ, Մովսէս Խորենացի:</p> <p>-Պատմել որ 449-ին Հայաստան հասաւ Յագկերտի մէկ հրովարտակը: Ան հայերը կը հրաւիրէր ընդունելու գրադաշտական կրօնքը:</p> <p>-Նշել որ հայերը մերժեցին հպատակիլ պարսիկ արքային եւ ըսին.-Այս հաւատքէն ո՛չ ոք կրնայ խախտել մեզ, ո՛չ հրեշտակները, ո՛չ մարդիկ, ո՛չ սուր, ո՛չ հուր:</p> <p>-Վեր առնել Վարդան Մամիկոնեանի վայելած վարկը՝ յանդուգն, ուղղամիտ, հայերնասէր, խիզախ եւ քաջ պատերազմիկ:</p> <p>-Նշել ճակատամարտի տեղեկութիւնները.</p> <p>-451-ի գարնան սկիզբը.</p> <p>-Աւարայրի դաշտի Տղմուտ գետի եզերքը.</p>
--	--

<p>ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԻՒՆ</p> <p>Հայ մշակութային եղեռներ</p> <p>Հայոց ցեղասպանության նուիրում յուշարձան, համալիր</p>	<p>-Վարդանի զորքին թիւր 60 հազար հոգի·</p> <p>-Պարսկական բանակը՝ 300 հազար:</p> <p>-Վարդան նահատակուեցաւ:</p> <p>-Վերլուծել որ Աւարայրի ճակատամարտը հայոց պատմութեան լուսաւոր թուականներէն մէկն է, ուր հայ ժողովուրդը պատերազմեցաւ ազատ կամքի եւ անկաշկանդ հաւատքի համար:</p> <p>-Գիտնալ ո՞ւր կազմաւորուեցան երիտօրրքերը եւ ե՞րբ հասան իշխանութեան:</p> <p>-Սահմանել փանթորանականութիւնը:</p> <p>-Գիտնալ որ հայոց ցեղասպանութիւնը ինչպէ՞ս սկսաւ:</p> <p>-Գիտնալ նպատակը:</p> <p>-Միջազգային ի՞նչ պայմաններու մէջ եւ ինչպէ՞ս գործադրուեցաւ:</p> <p>-Գիտնալ որ երիտօրրքերը քանդեցին մզկիթի, սրճարանի, բանտի եւ գործարանի վերածեցին մեր եկեղեցիները, վանքերը եւ դպրոցները:</p> <p>-Գիտնալ ե՞րբ եւ ինչո՞ւ համար կառուցուեցաւ Պիքֆայայի նահատակաց յուշարձանը:</p> <p>-Գիտնալ ե՞րբ եւ ինչո՞ւ կառուցուեցաւ Ծիծեռնակաբերդի յուշահամալիրը:</p>
--	---